տիս Աստուծոյ և Մարգարէին։ Այսոքիկ են դաշինք եւ պայմանք Մարգարէին, զոր եդ եւ օրինադրեաց ընդ նոսա կատարելով զուխտն՝ զոր խոստացաւ։ Մի երբէք լինել խորհրդատու միում 'ի պատերազմող ազգէ ընդ այլ պատերազմող ազգս, եւ կամ ընդ միում յիսլամաց, ոչ յայտնի եւ ոչ 'ի ծածուկ։ Ոչ ընդունիլ զթշնամիս Իսլամաց 'ի տունս իւրեանց· ոչ օգնել կամ նիզակակից լինել միում 'ի պատերազմող ազգաց· ոչ տալ փոխ զզէնս իւրեանց։ Ոչ առնուլ աւանդ զինչս եւ զերիվարս նոցա։ Ոչ թղթակցութիւն եւ ոչ բարեկամութիւն հաստատել ընդ նոսա· ոչ արգելուլ զիսլամն 'ի թշնամեաց իւրեանց՝ եւ ոչ կերակրել զհիւրս նոցա· ոչ յայտնել թշնամեաց զհանգամանս Իսլամաց, և մի իւիք թերանալ 'ի պարտեաց եւ նուազել 'ի պարգեւաց Մարգարէին, զոր ըստ բանից նորա, գրեցին երկոքին շէյխքն Սագա և Սիւպքի։

Եթէ ոք լուծցէ մի ինչ 'ի դաշանցս յայսցանէ, հեռացեալ լիցի նա 'ի պարտեացն Աստուծոյ եւ Մարգարէի նորին։

Ահա այս է ուխտ եւ դաշինք, զոր ետուն Մարգարէն եւ բարեկամք նորին՝ Աբրահամ վարդապետին, եպիսկոպոսաց, քահանայից, կրօնաւորաց եւ ժողովրդոց ազգի նոցին և հետեւակ երից ազգաց, որք են՝ Հապէշք, Գըպտիք և Ասորիք։ Լինիլ հաւատարիմ պարտիքն Աստուծոյ, Մարգարէին և բարեկամաց նորին, և իմ, և ամենայն Իսլամաց գործադրելի։ Զի որպէս ետ Աստուած 'ի ձեռն Մարգարէին ժողովրդոց նորին, հաւատով կատարել զխոստումն· նմանապէս կատարեսցեն զուխտն իմ հետեւողք և յաջորդք եւ այլք յիսլամաց եւ 'ի մահմետական ժողովրդոց յաւիտեանս, մինչեւ եկեսցէ ժամանակ՝ յորում ժառանգեսցէ Աստուած զերկիր և զոր ինչ 'ի նմա· և նա է բարին ժառանգաց։ Վկայեցին այսմ եղբարք, որք գրեան 'ի ժողովին։

Ի յամսեանն Բէհէպի ՕԼԳ (1187)։

Հասան էլ Ամրաթ Շահամէթոդին Նէճիթոդին Եսոսոֆ Իզէդդին
Ֆիրդոսաղբ։ Սէրիաշ։ Արդանամ։ Ճոսդէ Պեկ։
Ապու էլ Ավլան Հաճի
Պէն Պիրհան։